Արտաքին կապերի ոլորտում ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017 թվականի տարեկան ծրագրի կատարողականը

h/h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառման ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		նախատեսված	Չնախատեսված, սակայն փաստացի կատարված	նախատեսված	փաստացի	
	1	2ա	2բ	3ա	3բ	4
1	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի	1. ՀՀ Արագածոտնի մարզի և Բելառուսի Հանրապետության Մոգիլյովի մարզի միջև կնքված երկկողմ փոխշահավետ համագործակցության համաձայնագրի կետերի կատարման իրականացում		2017թ. ընթացքում		ՀՀ Արագածոտնի մարզի և Բելառուսի Հանրապետության Մոգիլյովի գործակցության շրջանակում Բելառուսի Հանրապետության Մոգիլյովի և ՀՀ Արագածոտնի մարզերի ղեկավարների միջեւ տեղի են ունեցել հեռախոսազրույցներ, քննարկվել են ընթացիկ հարցեր: Քննարկվել են գյուղատնտեսության

	կատարում					տեխնիկայի արտադրության խթանմանն առնչվող հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել գյուղատնտեսական մթերքների արտահանման ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի շուրջ:
		2. Աջակցում Ասիական զարգացման բանկի հետ կնքված փաստաթղթերի համաձայն Հյուսիս-Հարավ մայրուղու կառուցման գործընթացին		2011-2017թթ.		ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հանձնաժողովի և մարզպետարանի պատասխանատուների կողմից հանդիպումներ են տեղի ունեցել Հյուսիս-Հարավ մայրուղու տարածքով անցնող 16 համայնքների ղեկավարների և սեփականատերերի հետ, ճշգրտվել են կառույցի հատվածում ներգրավված անշարժ գույքերի կադաստրային

						տվյալները, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հանձնաժողովի փորձաքննության ներկայացուցիչների կողմից անց է կացվել բնապահպանական փորձաքննություն: Շինարարությունն ընթանում է ըստ ժամանակացույցի:
			1.ԵՎրամիությանֆինանսավորմամբ և Ավստրիական զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ, օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության ,,Ագրոլոգ,, օրգանական ուսումնաարտադրական կենտրոնի ստեղծում		2017թ. հունիսի 30	ԵՎրամիությանֆինանսավորմամբ և Ավստրիական զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում ստեղծվել է օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության ,,Ագրոլոգ,, օրգանական ուսումնաարտադրական կենտրոն :
			2. «Երեմյան		2017թ. հուլիսի	«Երեմյան Փրոջեքթս»

			Փրոջեքթս» ընկերության նախաձեռնությամբ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ, «Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի կողմից գյուղատնտեսական արտադրանքի մթերման կետի բացում Ավան համայնքում		18	ընկերության նախաձեռնությամբ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ, «Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի կողմից Ավան համայնքում բացվել է գյուղատնտեսական արտադրանքի մթերման կետ, որտեղ համայնքի բնակիչները շուկայական գներով կարող են հանձնել իրենց գյուղմթերքները:
			3.Հայաստանցի ներդրողների խմբի միջոցներով		2017թ. նոյեմբերի 7	Հայաստանցի ներդրողների խմբի միջոցներով

			«Վերականգնվող էներգիայի աջակցություն» ծրագրի շրջանակում Գերմանա-հայկական հիմնադրամի համաֆինանսավորմամբ և KFW բանկի կողմից Հայաստանում ամենամեծ՝ 1 ՄՎտ հզորությամբ «Թալին-1» արևային կայանի կառուցում Թալին քաղաքում			«Վերականգնվող էներգիայի աջակցություն» ծրագրի շրջանակում Գերմանա-հայկական հիմնադրամի համաֆինանսավորմամբ և KFW բանկի կողմից Թալին քաղաքում կառուցվել է Հայաստանում ամենամեծ՝ 1 ՄՎտ հզորությամբ «Թալին-1» արևային կայանը :
			4. Ավստրիայի զարգացման գործակալության և GIZ-ի կողմից Արագածոտնի մարզպետարանի և ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ «2014-2017թթ. համար Համայնքային ինտեգրված էրոզիայի ռիսկի կառավարման ծրագրի» իրականացում		2014-2017թթ	Ավստրիայի զարգացման գործակալության և GIZ-ի կողմից ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ ՀՀ Արագածոտնի մարզում իրականացվում է «2014-2017թթ. համար Համայնքային ինտեգրված էրոզիայի ռիսկի կառավարման ծրագիրը»: Ծրագրի շրջանակում էռոզիացված հողերում կատարվում են անտառհիմնման աշխատանքներ:

			5. Ամերիկյան բարեգործական կազմակերպության կողմից / ,,Վերջին օրերի սրբեր,,/ ,Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում,, ծրագրով խողովակների մոնտաժում և ցայտաղբյուրների տեղադրում		2017թ. ընթացքում	Ամերիկյան բարեգործական կազմակերպության կողմից / ,,Վերջին օրերի սրբեր,,/ ,,Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում,, ծրագրով կատարվել են խողովակների մոնտաժման և ցայտաղբյուրների տեղադրման աշխատանքներ Ափնագյուղ.Կայք,Վարդենիս,Ծաղկահովիտ հանայնքներում:
			6.«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Օշական գյուղի դպրոցի հիմնական մասնաշենքի ջեռուցման ներքին համակարգի վերակառուցում		2017թ. ընթացքում	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից վերակառուցվել է Օշական գյուղի դպրոցի հիմնական մասնաշենքի ջեռուցման ներքին համակարգը:
			7.«Հայաստան» համահայկական		2017թ. ընթացքում	«Հայաստան» համահայկական

			հիմնադրամի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում			հիմնադրամի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում կառուցվել է մանկապարտեզ :
			8.IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ Աղձք համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում		2017թ. ընթացքում	IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ վերակառուցվել է Աղձք համայնքի ջրամատակարարման համակարգը :
			9.IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ Արագած համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում		2017թ. ընթացքում	IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ վերակառուցվել է Արագած համայնքի ջրամատակարարման համակարգը:
			10.IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ Վարդենուտ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում		2017թ. ընթացքում	IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ վերակառուցվել է Վարդենուտ համայնքի ջրամատակարարման համակարգը:

2	Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրերի կամ այլ փաստաթղթերի /ծրագրերի կնքում և կատարում	1. Թալինի քաղաքապետարանի պատվիրակության այցը Ֆրանսիայի Բուրգ լե Վալանս քաղաք		2017թ. հոկտեմբերի 30-նոյեմբերի 05		ՀՀ Արագածոտնի մարզի Թալին եւ Ֆրանսիական Բուրգ լե Վալանս քաղաքների փոխգործակցության համաձայնագրի շրջանակում Թալին քաղաքի պատվիրակությունն այցելել է Ֆրանսիայի Բուրգ Լե վալանս քաղաք: Պատվիրակությունը մասնակցել է Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ կազմակերպված տոնավաճառ-ցուցահանդեսին:
		2.Ֆրանսիական Ալֆորվիլ քաղաքի Օշական համայնքի միջև առկա գործակցության շրջանակում Օշական համայնքի		2017թ. նոյեմբերի 18-22		Ֆրանսիական Ալֆորվիլ քաղաքի Օշական համայնքի միջև առկա գործակցության շրջանակում Օշական համայնքի պատվիրակությունն

		պատվիրակության այցը Ալֆորվիլ քաղաք				այցելել է Ալֆորվիլ քաղաք: Պատվիրակությունը մասնակցել է Ալֆորվիլի և Արցախի Բերձոր համայնքի միջև համաձայնագրի ստորագրման արարողությանը:
		3. ՌԴ Կարելիայի Հանրապետության ղեկավար Ա.Խուդիլայնենի նախատեղվող այցը ՀՀ Արագածոտնի մարզ		2017 թ. ընթացքում		ՀՀ Արագածոտնի մարզպետի հրավերով նախատեսվում է ՌԴ Կարելիայի Հանրապետության ղեկավար Ա.Խուդիլայնենի այցը ՀՀ Արագածոտնի մարզ: Այցի նպատակը կողմերի միջեւ համագործակցության հաստատումն է: Այցը չի կայացել Կարելիայի կողմի զբաղվածության պատճառով:
3	Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների		1. Մասնակցություն Իրանի Իսլամական Հանրապետության տոնին նվիրված ընդունելության		2017թ. փետրվարի 12	Մարզի ղեկավարությունը մասնակցել է կառավարության ընդունելությունների

	տարածքային միավորումներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների, տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում		կառավարության ընդունելությունների տանը			տանը կազմակերպված՝ Իրանի Իսլամական Հանրապետության տոնին նվիրված ընդունելությանը:
			2.Մարզպետի հրավերով՝ Իրանի Խորասան Ռազավիի նահանգապետ Ալի Ռեզա Ռաշիդի այցը Արագածոտնի մարզ		2017թ. մայիս	Մարզպետի հրավերով Իրանի Խորասան Ռազավիի նահանգապետ Ալի Ռեզա Ռաշիդիանը պատրաստակամություն է հայտնել այցելել Արագածոտնի մարզ: Աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով այցը հետաձգվել է:
			3.ԱՄՆ փոխդեսպան Ռաֆիկ Մանսուրիի և դեսպանատան ու Խաղաղության կորպուսի աշխատակիցների այցը Արագածոտնի մարզ		2017թ. մայիսի 25	ԱՄՆ փոխդեսպան Ռաֆիկ Մանսուրին, դեսպանատան և Խաղաղության կորպուսի աշխատակիցներն այցելել են Արագածոտնի մարզ: Բազմաղբյուր համայնքի Ն.Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոցում նրանք ծանոթացել են

						Բազմաղբյուր գյուղում բնակվող Խաղաղության կորպուսի կամավոր Տովա Գոլդի աշխատանքին: Տովան ԱՄՆ Վիրջինիա նահանգից է, 2016 թվականի հունիս ամսից հյուրընկալվել է Բազմաղբյուր համայնքում: Մեկ տարվա ընթացքում համայնքի երիտասարդների համար կատարել է կամավորական աշխատանք՝ բացելով անգլերենի, պարի խմբակներ, կազմակերպելով բազմաբովանդակ միջոցառումներ:
			4.Հայ-վրացական համագործակցության շրջանակում մարզպետ Աշոտ Սիմոնյանի նամակ հրավերը Վրաստանի Գուրիա երկրամասի նահանգապետ Գիա		2017թ. օգոստոսի 3	2017 թ. ապրիլի 19-ին և մայիսի 16-ին Բաթումում ՀՀ գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանի՝ Վրաստանի Իմերեթի և Գուրիայի երկրամասեր (տարածարջաններ)

			Սալուկվաձեին՝ Արագածոտնի մարզ այցելելու կապակցությամբ			աշխատանքային այցերի ժամանակ տեղական իշխանությունների ղեկավարների հետ քննարկվել և պայմանավորվածությունն է ձեռք բերվել հայ-վրացական համագործակցության շրջանակում տարածաշրջանային, քաղաքային և համայնքային մակարդակներով ապակենտրոնացված և ուղիղ կապերի հաստատման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու մասին: Գուրիա երկրամասի նահանգապետ Գիա Սալուկվաձեի հետ հանդիպման ժամանակ քննարկվել է Արագածոտնի մարզի և Գուրիա երկրամասի միջև ուղիղ համագործակցության հաստատման հնարավորությունները: Այդ առիթով,

						համապատասխան ծանոթության և հուշագիր ստորագրելու նպատակով, Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանը Վրաստանի Գուրիա երկրամասի նահանգապետ Գիա Սալուկվաձեին հրավիրել է ՀՀ Արագածոտնի մարզ:
			5.Հայ-վրացական համագործակցության շրջանակում Աշտարակի քաղաքապետ Թովմաս Շահվերդյանի նամակ-հրավերը Վրաստանի Գուրիա երկրամասի Օզուրգեթիի քաղաքապետ Բեգլար Սիորիձեին՝ Աշտարակ քաղաք այցելելու կապակցությամբ		2017թ. օգոստոսի 3	Հայ-վրացական համագործակցության շրջանակում համապատասխան ծանոթության և հուշագիր ստորագրելու նպատակով, Աշտարակի քաղաքապետ Թովմաս Շահվերդյանը Վրաստանի Գուրիա երկրամասի Վրաստանի Գուրիա երկրամասի Օզուրգեթիի քաղաքապետ Բեգլար Սիորիձեին հրավիրել է այցելել Աշտարակ

						քաղաք:
			6. Մասնակցություն «Հայաստան – Ռուսաստան. համագործակցության բոլոր եզրերը» խորագիրը կրող Հայ-ռուսական միջտարածաշրջանայի ն 6-րդ համաժողովին		2017թ. հոկտեմբերի 05	Մարզի պատվիրակությունը մասնակցել է «Հայաստան – Ռուսաստան. համագործակցության բոլոր եզրերը» խորագիրը կրող Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովին:
			7. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի նախագծում ընդգրկելու նպատակով առաջարկությունների ներկայացում		2017թ. նոյեմբերի 7	Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի Փոխըմբռնման հուշագրի նախագծում ընդգրկելու նպատակով գրությունը քննարկվել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմում: Առաջարկություններ են ներկայացվել գյուղատնտեսության, արդյունաբերության, զբոսաշրջության զարգացման

						վերաբերյալ:
			8. Հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստի արձանագրության կետերի կատարման մասին տեղեկատվություն տրամադրելում		2017թ. դեկտեմբերի 11	Հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստի արձանագրության մասին գրությունը ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմում: Քննարկման արդյունքում առաջարկություններ են ներկայացվել գյուղատնտեսության, արդյունաբերության, զբոսաշրջության զարգացման վերաբերյալ:
			9.Բուլղարիայի Հանրապետության Ստարա Զագորայի մարզի ղեկավարին		2017թ. դեկտեմբերի 5	Արագածոտնի մարզը պատրաստակամություն է հայտնել բարեկամական և

			ուղղված՝ Արագածոտնի մարզպետի հրավեր–նամակը			համագործակցային կապեր հաստատել Բուլղարիայի Հանրապետության Ստարա Զագորայի մարզի հետ, որի համար մարզպետ Աշոտ Սիմոնյանը մարզի ղեկավարին հրավիրել է այցելել Արագածոտնի մարզ:
4	Բազմակողմ այլ միջոցառումներ		1.Մասնակցություն ՄԱԿ-ի UNFPA-ի կողմից կազմակերպված ,,Կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելում. Եվրոպական փորձի ներկայացում,, միջազգային համաժողովին		2017թ. հունվարի 31	Մարզի պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի UNFPA-ի կողմից կազմակերպված ,,Կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելում. Եվրոպական փորձի ներկայացում,, միջազգային համաժողովին:
			2.«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և		2017թ. մարտ	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվել է «Օժանդակություն Հայաստանի

			Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի իրականացում			Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրիը, որի շրջանակում սննդամթերքի փաթեթներ են հատկացվել մարզի Թալին եւ Ակունք համայնքներին:
			3.Հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի արձանագրության նախագծում ներառելու համար համագործակցության զարգացման նպատակով առաջարկությունների ներկայացում		2017թ. ապրիլի 3	Հայ-իտալական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի արձանագրության նախագծում ներառելու համար համագործակցության զարգացման նպատակով ներկայացվել են առաջարկությունների, որտեղ ընդգրկված են գյուղատնտեսության, արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի

						զարգացման, զբոսաշրջության, կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, սոցիալական, երեպանորի իրավունքների պաշտպանության ոլորտները:
			4.Մասնակցություն Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանության Ռազմական Համագործակցության Գրասենյակի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կազմակերպած «Հայաստանի Հանրապետությունում աղետների ժամանակ		2017թ. մայիսի 22-23	Մարզի պատվիրակությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանության Ռազմական Համագործակցության Գրասենյակի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կազմակերպած «Հայաստանի

			(Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթար) միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնի ծավալումը և աշխատանքի կազմակերպումը» թեմայով աշխատաժողովին			Հանրապետությունում աղետների ժամանակ (Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթար) միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնի ծավալումը և աշխատանքի կազմակերպումը» թեմայով աշխատաժողովին:
			5.Մասնակցություն ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված Technovation Challenge միջազգային մրցույթին		2017թ. մայիս-հուլիս	Կարբիի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցի One Step Ahead թիմը մասնակցել է ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված Technovation Challenge միջազգային մրցույթին և նրա մշակած հավելվածը հաղթող է

						ճանաչվել «Կրթություն» անվանակարգում: Կիսաեզրափակիչ փուլում հաղթող է ճանաչվել նաեւ Աշտարակի թիվ 2 դպրոցի թիմը:
			6.Մասնակցություն Օշականի ճակատամարտի 190 ամյակին նվիրված միջոցառմանը		2017թ. օգոստոսի 17	ՀՀ -ում ՌԴ դեսպան Ի. Վոլինկինի հրավերով մարզի ղեկավարությունը մասնակցել է ,, Օշականի հերոսամարտին,, հուշակոթողի մոտ կազմակերպված միջոցառմանը՝ նվիրված Օշականի ճակատամարտի 190 ամյակին:
			7.ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի կողմից ,,Դպրոցական տաք		2017թ. սեպտեմբերի 8-13	«Ավանդական Տոների Վերածնունդ» ՀԿ-ի կողմից Բյուրական համայնքում

			սնունդ,, ծրագրի իրականացում			կազմակերպվել է «Հայաստանը խաղաղության խաչմերուկում» միջազգային Ֆոլկլորային փառատոնը: Վեցերորդ տարին անընդմեջ կազմակերպվող փառատոնին մասնակցել են իսրայելական մշակույթը ներկայացնող խմբեր, պաղեստինցի, հրեա, արաբ, ռուս երգիչ-երաժիտներ, պարուհիներ, ինչպես նաև Հայաստանը ներկայացնող ֆոլկլորային խմբեր:
			8.Մասնակցություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /ԳՄՀԸ/ կողմից իրականացվող ,,Լավ տեղական ինքնակառավարում Հարավային		2017թ. սեպտեմբերի 11	Մարզպետարանի ՀԿՀՏ մասնագետները մասնակցել են Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և

			Կովկասում,, ծրագրի կողմից կազմակերպված ,,Գիտելիքի կառավարում,, սեմինարին			Հայաստանում Շվեյցարիայի զարգացման և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ կազմակերպված ,,Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում,, ծրագրի կողմից կազմակերպված ,,Գիտելիքի կառավարում,, սեմինարին:
			9. ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ և Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոն,,-ի կողմից իրականացվող 2017թ.-ի		2017թ. մարտ-նոյեմբեր.	ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ և Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի բնակարանաշինության ծրագրով իրականացվել է

			բնակարանաշինության ծրագրի ըջանակում Արագածոտնի մարզի Զարինջա համայնքում բնակվող Ավետիսյանների տան շինարարություն			Արագածոտնի մարզի Զարինջա համայնքում բնակվող Ավետիսյանների տան շինարարությունը: Ընտանիքը 30 տարի շարունակ բնակվել է վագոն-տնակում:
			10.Մասնակցություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Հայաստանի համայնքների միության և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի համատեղ ջանքերով՝ Շվեյցարիայի կառավարության ֆինանսավորմամբ Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Ինստիտուցիոնալ		2017 սեպտեմբերի 10	Մարզպետը մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Հայաստանի համայնքների միության և Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի համատեղ ջանքերով՝ Շվեյցարիայի կառավարության ֆինանսավորմամբ Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից իրականացվող «Ինստիտուցիոնալ աջակցություն

			աջակցություն Հայաստանի համայնքների միությանը» ծրագրի շրջանակներում Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում «Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ» համաժողովին			Հայաստանի համայնքների միությանը» ծրագրի շրջանակներում Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում «Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ» համաժողովին:
			11.ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» համագործակցության շնորհիվ Արագածոտն համայնքում կիսակառույց տան շինարարություն		2017թ. նոյեմբերի 24	ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» համագործակցության շնորհիվ Արագածոտն համայնքում կառուցվել է Գևորգյանների կիսակառույց տունը:
			12.,,Վորլդ Վիժն Հայաստան,, բարեգործական կազմակերպության կողմից սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում		2017թ. ընթացքում	,,Վորլդ Վիժն Հայաստան,, բարեգործական կազմակերպությունը Թալինի և Ապարանի տարածաշրջաններում իրականացնում է սոցիալական աջակցության

						ծրագրեր:
			13.,,Լայթ հաուս,, , ,,Փյունիկ,, , ,, Շողիկ,, ,,Սատար,, միջազգային բարեգործական հիմնադրամների կողմից սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում		2017թ. ընթացքում	,,Լայթ հաուս,, , ,,Փյունիկ,, , ,, Շողիկ,, ,,Սատար,, միջազգային բարեգործական հիմնադրամների կողմից իրականացվում է սոցիալական աջակցության ծրագրեր:
			14.Ամերիկյան «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի կողմից աջակցություն նպաստառու ընտանիքներին		2017թ. դեկտեմբերի 1	,,Արմենիան Լայթհաուս,, բարեգործական կազմակերպությունը 100 անապահով ընտանիքի համար տրամադրեց հագուստի փաթեթներ:
			15.Բարեգործական ծրագրի իրականացում Դիակոնիա բարեգործական հիմնադրամի կողմից		2017թ. դեկտեմբերի 5	Դիակոնիա բարեգործական հիմնադրամը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին տրամադրել է ձմեռային տաք հագուստ,

						երկարաճիտ կոշիկներ և բաճկոններ: Շահառուների թիվը 100 երեխա է:
			16.ՎիվաՍել-ՄՏՍ-ի և «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» համագործակցության կողմից Ն. Բազմաբերդ համայնքում կիսակառույց տան շինարարություն		2017թ. դեկտեմբերի 7	ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» համագործակցության կողմից Ն. Բազմաբերդ համայնքում կառուցվել է Մանուկյանների կիսակառույց տունը:
			17.,,Էներգառեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր,, միջազգային կրթական ծրագրի կողմից էլեկտրաէներգիայի խնայողության, ջերմային ռեժիմի պահպանման, ինչպես նաեւ՝ առկա ռեսուրսների ճիշտ օգտագործման ուսուցում հանրակրթական դպրոցներում		2017թ. ընթացքում	,,Էներգառեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր,, միջազգային կրթական ծրագրի կողմից մարզի 16 դպրոցում իրականացվում է էլեկտրաէներգիայի խնայողության, ջերմային ռեժիմի պահպանման, ինչպես նաեւ՝ առկա ռեսուրսների ճիշտ օգտագործման ուսուցում:

			18. 2018թ. մարտ-ապրիլ ամիսներին ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվելիք Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան նվիրված միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի ներկայացում		2017թ. դեկտեմբերի 8	ՀՀ կրթության եւ գտության նախարարություն է ներկայացվել 2018թ. մարտ-ապրիլ ամիսներին ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվելիք Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան նվիրված միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը, որտեղ ներառված են թեմատիկ միջոցառումների, դասախոսությունների, գրական ընթերցումների, բաց դասերի, ֆրասահայ նշանավոր անձանց նվիրված ցերեկույթների, կինոդիտումների կազմակերպում: